

ԴԱՍԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ  
ԳՈՒՆԱՐ ԿՈՒՆԱՐԵԱՆ

Յունարան լեզուն ստեղծուել է հիմնականում «գիտական» բնոյթի երկերի թարգմանութեան ընթացքում: Այդ լեզուն որոշակի ազդեցութիւն է գործել ողջ գրական լեզուի վրայ, եւ հետագայ հեղինակներն այս կամ այն չափով կիրառել են նրա առանձնայատկութիւնները<sup>1</sup>: Դրանցից յատկապէս նշուում են նախածանցաւոր (ինչպէս նաեւ այլ բաղադրեալ, ակնյայտօրէն արհեստական) բառերը, յունարէն իւրայատուկ շարահիւսական դարձուածների պատճէնումները եւ որոշ արհեստական քերականական ձեւեր, այսինքն՝ այնպիսի տարրեր, որոնք բացակայում են դասական լեզուում<sup>2</sup>:

Մենք փորձում ենք այդ ակնյայտ իրողութիւնը դիտարկել այլ տեսանկիւնից: Եթէ յունարանութիւնները բնագրի տառացի վերարտադրման արդիւնք են, նորամուտութիւն լեզուի մէջ, եւ յայտնուելու պահին լեզուական նորմի «խախտում» (ինչպէս հետագայում՝ նոր լեզուական նորմ), ապա ինչպիսի՞ն է պատկերն այդ նորմը չխախտելու դէպքում: Այլ կերպ ասած՝ ինչո՞վ են միմեանցից տարբերում միեւնոյն յունարէն տեքստի «դասական» եւ «յունարան» թարգմանութիւնները:

Հր. Աճառեանի Հայոց լեզուի պատմութիւն աշխատութեան երկրորդ հատորն ունի «Յունարան Հայերէն» գլուխը: Այդ գլխում Աճառեանը ներկայացրել է յունարան տեքստերի նմուշներ: Դրանց թուում մեր ուշադրութիւնը գրաւեցին Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան թարգմանութեան մի շարք հատուածներ, որոնք Տիմոթէոսը մէջբերել էր Նոր Կտակարանից, եւ դրանց զուգահեռ նոյն հատուածները Հայերէն Աստուածաշնչի կանոնա-

կան տեքստից, այսինքն՝ նոյն յունարէն հատուածների երկու տարբեր՝ դասական եւ յունարան թարգմանութիւնների նմուշներ<sup>3</sup>: Քանի որ նորկտակարանային բազում այլ մէջբերումներ կան Հակաճառութեան տեքստում, մենք կատարեցինք դրանց սպառիչ ուսումնասիրութիւնը՝ Նոր Կտակարանի Համապատասխան հատուածների Համեմատութեամբ: Աճառեանի մատնանշած զուգահեռ տեքստերի շարքում կայ նաեւ մի հատուած Յովհան Ոսկեբերանի՝ Պօղոսի թղթերի մեկնութիւնից, դարձեալ Տիմոթէոսի թարգմանութեան մէջ, եւ նոյն մեկնութեան դասական թարգմանութիւնից<sup>4</sup>. այդ զուգահեռները մենք եւս դիտարկել ենք:

Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը նուիրուած է Քաղկեդոնի ժողովի ու երկաբնակ դաւանանքի հերքմանը եւ լի է մէջբերումներով Եկեղեցու Հայրերից, ինչպէս նաեւ Սուրբ Գրքից: Չնայած մէջբերուած երկերի մի մասն արդէն թարգմանուած կար Հայերէն, Հակաճառութեան թարգմանիչը նորովի է թարգմանել դրանք՝ իրեն յատուկ յունարան ոճով<sup>5</sup>:

Նորկտակարանային մէջբերումները Հանրայայտ հատուածներ էին պարունակում, եւ դրանց կանոնական Հայերէն տեքստը Տիմոթէոսի թարգմանիչն անշուշտ զգալի չափով անգիր գիտէր: Այդ Հանգամանքն արտացոլուել է նրա թարգմանութեան մէջ. երբեմն այն Համարեայ Համընկնում է Հայերէն կանոնական տեքստին, սակայն յաճախ այս կամ այն չափով շեղում նրանից: Այդ՝ երբեմն շատ զգալի շեղումների դէպքում է, որ ի

յայտ են գալիս յունարան լեզուին բնորոշ գծերը:

«Յունարան» թարգմանութեան եղանակը տարբերում է «դասականից» յունարէն բնագրը տառացի թարգմանելու ձգտումով: Դասական թարգմանութիւնները, ինչպէս յայտնի է իմասնաբանական ճշգրիտ են, ինչ լեզուի առումով բաւական ազատ<sup>6</sup> յունարէնի առանձնայատկութիւնները փոխանցելու Համար թարգմանիչները ձգտել են գտնել հնարաւորին չափ համարժէք, սակայն Հայերէնի նորմերին չհակասող միջոցներ: Այդ երկու մեթոդների տարբերութեամբ էլ բացատրուում են յունարէն միեւնոյն հատուածների տարբեր թարգմանութիւններում լեզուական տարբեր արտայայտումները:

Մեր արձանագրած զուգահեռները խմբաւորենք հետեւեալ աւանդական եղանակով.

1. ԲԱՆԱՊԱՇԱՐ

1.1 Յունարէն Աստուածաճառք բառերը Տիմոթէոսի թարգմանիչը ձգտել է՝

1.1.1. պատճէնել, միմեանցի դասական թարգմանութիւններում դրանց համարժէքը լեզուում գոյութիւն ունեցող բառեր են՝ առիմացելոց (Տիմ. 301<sup>7</sup>) - παρεπιδήμοις (Ա Պետ. Ա 1) - նժդեհից բացառաւորապէս (Տիմ. 308) - ἀπαύγασμα (Եբր. Ա 3) - լոյս.

դերաբրիստոսիս (Տիմ. 303) - ἀντιχρίστου (Ա Յովհ. Գ 3) - նեւրին.

եմթակացութեան (Տիմ. 308) - ὑποστάσεως (Եբր. Ա 3) - էութեան.

Աստուածաբան (Տիմ. 305) - οἱ προγεγραμμένοι (Յուդ. 4) - որ... կատարեալ էին.

(Տիմ. 313) - πρωτότοκος (Կող. Ա 15) - անդրանիկ. շարունակ (Տիմ. 210) - συνέχει (Բ

Կող. Ե 14) - ստիպէ. ստորերկրականաց (Տիմ. 312) - καταχθονίων (Փիլիպ. Բ 10) - սանդարամետականաց.

ստորեկեցէ (Տիմ. 306) - καταβήσεται (Հռոմ. Ժ 7) - իջանիցէ.

վերակացու (Տիմ. 294) - ἐπίστατα (Ղուկ. Ը 24) - վարդապետ. վերադիտող (Տիմ. 58) - ἐπίσκοπος (Գործ. Ի 28) - տեսուչ.

վայրածել (Տիմ. 306) - καταγαγεῖν (Հռոմ. Ժ 6) - իջուցանել. վերածել (Տիմ. 306) - ἀναγαγεῖν (Հռոմ. Ժ 7) - հանել.

փոխադրելով (Տիմ. 305) - μετατιθέντες (Յուդ. 4) - որ... դարձուցին. փոխակացոյց (Տիմ. 313) - μετέστησεν (Կող. Ա 13) - փոխեաց.

փոխարկելով լինի (Տիմ. 324) - μεταβάλλεται (PG 62. 437) - փոփոխմունս փոփոխի (Ոսկ. Պող. Բ 447):

Որոշ դէպքերում նախածանցաւոր պատճէնումը եւ պարզ բառը միեւնոյն արմատն ունեն.

ստածել (Տիմ. 323) - παραγαγεῖν (PG 62. 436) - ածել (Ոսկ. Պող. Բ 445).

հակափրկանակ (Տիմ. 98) - ἀντίλυτρον (Ա Տիմ. Բ 6) - փրկանս.

Աստուածաց (Տիմ. 207) - προέθετο (Հռոմ. Գ 25) - յառաջն եղ. վերադիտել (Տիմ. 293) - ἀναβλέπουσιν (Ղուկ. Է 22) - տեսանեն.

վերելեցէ (Տիմ. 306) - ἀναβήσεται (Հռոմ. Ժ 6) - ելանիցէ. վերեկեցէ (Տիմ. 292) - ἐπελεύσεται (Ղուկ. Ա 35) - եկեցէ:

1.1.2. Կան Աստուածաճառք բառերը «կիսապատճէնելու» դէպքեր.

ա) բարդ բառերի օգնութեամբ՝ ստաշիկայն (Տիմ. 309) - τὸν προκειμενον (Եբր. ԺԲ 1) - որ առաջի կայ.

վայրարկելու (Տիմ. 324) - καταβαλλόμενον (PG 62. 437) - որ սերմանի (Ոսկ.

Պօղ. Բ 447).

վայրասանարամետից (Տիմ. 175) - καταχθονίων (Փիլիպ. Բ 10) - սանդարամետականաց.

բ) բառակապակցութեամբ, որի մէջ յունարէն նախածանցի իմաստն արտայայտուած է մակբայով.

արտաքս առաքեաց (Տիմ. 311) - ἔξαπέστειλεν (Գաղ. Դ 6) - առաքեաց.

արտաքս գնացէ (Տիմ. 310) - ἔξαγοράση (Գաղ. Դ 5) - գնացէ.

արտաքս խոստովանեացի (Տիմ. 312) - ἔξομολογήσεται (Փիլիպ. Բ 11) - խոստովան լիցի.

ի բաց անցուք (Տիմ. 311) - ἀπολάβωμεν (Գաղ. Դ 5) - ընկալցուք.

ի բաց դարձիր (Տիմ. 148) - ἀποτρέπου (Բ Տիմ. Գ 5) - խորշուշխր.

ի բաց երթութեան (Տիմ. 148) - τὴν ἀφιξίν (Գործ. Ի 29) - մեկնելոյ.

ի բաց թողեր (Տիմ. 79) - ἐγκατέλιπες (Մատթ. Ի 46) - թողեր.

ի բաց կացցեմ (Տիմ. 148) - ἀποστῆσονται (Ա Տիմ. Դ 1) - քակեցիւն.

ի ներքս ածցեմ (Տիմ. 303) - παρεισάξουσιν (Բ Պետ. Բ 1) - սպրդեալք մուծանեն.

ի ներքս մտիմ (Տիմ. 305) - παρεισέδυσαν (Յուդ. 4) - սպրդեցին մտին.

ի վայր արկեցելոյ (Տիմ. 324) - καταβλήσθεις (Մատթ. 62. 437) - յերկիր անկելոյ (Ոսկ. Պօղ. Բ 446):

Եթէ նկարագրական տարբեր եղանակներով թարգմանելու արդիւնք համարենք «սպրդեալ» եւ «յերկիր» ձեւերի կիրառութիւնը՝ մի կողմից, եւ «ի ներքս» ու «ի վայր» մակբայներինը՝ միւս, ապա ակնյայտ է, որ վերջին եղանակը շատ աւելի ձեւականացուած եւ միօրինակ է, ինչը մեզ թոյլ է տալիս այդ եղանակը «կիսապատճենում» անուանել: Յիշենք նաեւ այն ենթադրութիւնը, որ յունարան

թարգմանիչներն արհեստական նախածանցները կերտել են մակբայներից. «ի ներքս» ⇒ «ներ-», նաեւ՝ «ի բաց» ⇒ «բաց-», «արտաքս» ⇒ «արտ-» եւ այլն<sup>8</sup>:

1.1.3. Հետաքրքրական են այն դէպքերը, որոնցում Տիմոթէոսի թարգմանիչը պատճենել է նախածանցաւոր բառերը, իսկ դասական թարգմանիչը դիմել է մակբայ պարունակող բառակապակցութեամբ թարգմանելու եղանակին, որը, սակայն, «կիսապատճենում» որակելը ճիշտ չէր լինի, քանի որ այդ մակբայներից եւ ոչ մէկը ճշտագայում նախածանց կերտելու հիմք չի հանդիսացել.

բաղկացաւ (Տիմ. 313) - συνέστηκεν (Կող. Ա 17) - եկաց բովանդակ.

գերբարձրացոյց (Տիմ. 312) - ὑπερύψωσεν (Փիլիպ. Բ 9) - առաւել բարձրացոյց.

նախագնացես (Տիմ. 291) - προπορεύση (Ղուկ. Ա 76) - գնացես առաջի.

վերածնեաց (Տիմ. 301) - ἀναγεννήσας (Ա Պետ. Ա 3) - ծնաւ... վերստին.

շարունակէ (Տիմ. 324) - συνέχει (Մատթ. 62. 437) - միախուռն ունին (Ոսկ. Պօղ. Բ 447):

Համեմատութեան համար անդրադառնանք այլ թարգմանութիւնների. այսպէս՝ Բարոյախաւս-ի մէջ, որը յունարէն Physiologus-ի<sup>9</sup> դասական շրջանում իրականացուած թարգմանութիւնն է, բոլոր նախածանցաւոր բառերը թարգմանուած են ոչ տառացիօրէն՝ յունարէն բառի կառուցուածքը չարտացոլող բառով (ἀντικείμενος 35 - հակադրող 5) կամ բառակապակցութեամբ (σμπλέκεται 34 - շաղկապ կայ 5, καταβάλλε 47 - արկանել խոնարհ 22): Հետեւեալ զուգահեռ օրինակները քաղուած են «Կանոնագիրք հայոց»-ում ամփոփուած՝ նիկիայի ժողովին յղած Կոնստանտին կայսեր նամակից, ո-

րը թարգմանուած է դասական եղանակով, եւ այդ նոյն նամակի յունարան թարգմանութիւնից Սոկրատ Աքրաստիկոսի «Եկեղեցական պատմութեան» մէջ՝

համակամսն (Սոկր. 271<sup>10</sup>) - τοὺς αὐτῶ ὁμογνώμονας (Nic. Const. 34.211) - ոյք հաւասարեն կամաց նորա (Կ. 132.212).

շարագրում... համակարգութիւնս (Սոկր. 27) - σύγγραμμα συνταγέν (Nic. Const. 34.7) - գիրք եղեալ կամ կարգեալ (Կ. 132.8):

1.2. «Պատճենում» - «նկարագրական թարգմանութիւն» եղանակների գոյութեան կիրառութիւնն դիտում է եւ բարձր բառերի դէպքում. դրանց դասական թարգմանութիւնը՝

ա) յունարէն բառի կառուցուածքը չարտացոլող բառ է՝ բարեբանեալ (Տիմ. 292) - εὐλογημένη (Ղուկ. Ա 42) - օրհնեալ.

նիրակայ (Տիմ. 309) - εὐπερίστατον (Եբր. ԺԲ 1) - կարեւոր.

նիրավաստակազոյն (Տիմ. 293) - εὐκοπώτερον (Մարկ. Բ 9) - դիւրին.

կենսագործեալ (Տիմ. 302) - ζῳοποιήθεις (Ա Պետ. Գ 18) - կենդանի.

բ) կամ բառակապակցութիւն՝ խաղաղագործեալ (Տիմ. 313) - εἰρηνοποιήσας (Կող. Ա 20) - արար զխաղաղութիւն.

ճշգրտարանեմ (Տիմ. 324) - ἀκριβολογούνται (Մատթ. 62. 437) - ճշդիւ համարին (Ոսկ. Պօղ. Բ 447).

յոքնամասնարար (Տիմ. 313) - πολυμερῶς (Եբր. Ա 1) - բազում մասամբ.

յոքնայնդանակապէս (Տիմ. 313) - πολυτρόπως (Եբր. Ա 1) - բազում օրինակօք:

Բարոյախաւս-ում տասներեք բարդ բառի բառացի թարգմանութեան (σαρκόφαγος 62 - գիշակեր 31, λεπτοκλόνος 34 տողատակ - մանրաստ 5)<sup>13</sup> դիմաց արձանագրել ենք նկարագրական

թարգմանութեան տասնվեց օրինակ՝ պարզ բառով կամ բառակապակցութեամբ (σώφρων 52 - ցածեալ 28, εὐδία 49 - հոտանոյշ 25, ἑτεροδόξων 45 - աստարատի ուսմանց 20):

1.3. Նոր կտակարանում յարադիր բառերով թարգմանուած բայերը Տիմոթէոսի թարգմանիչն արտայայտում է մէկ բառով՝ լուսատրէ (Տիմ. 297) - φωτίζει (Յովհ. Ա 9) - լուսաւոր առնէ.

կէցեմ (Տիմ. 210) - ζῳσιν (Բ Կոր. Ե 15) - իցեն կենդանի.

հովանացի քեզ (Տիմ. 292) - ἐπισκιάσει σοι (Ղուկ. Ա 35) - հովանի լիցի ի վերայ քո.

երանեալ է (Տիմ. 293) - μακάριός ἐστιν (Ղուկ. Է 23) - երանի իցէ.

սրբեմ (Տիմ. 300) - ἀγιάζω (Յովհ. Ժ 19) - սուրբ առնեմ:

1.4. Յունարան թարգմանիչը տառացիութեան սկզբունքին է դիմում անգրական գոյականները յունարէնի անստացութեամբ եզակի թուով կիրառելիս՝

ի հաւատոյ (Տիմ. 306) - ἐκ πίστεως (Հռոմ. Ժ 6) - զհաւատոցն.

հաւատոյ (Տիմ. 207) - πίστεως (Հռոմ. Գ 25) - հաւատոցն.

յերկին (Տիմ. 306) - εἰς τὸν οὐρανόν (Հռոմ. Ժ 6) - յերկինս.

զճորհիմ (Տիմ. 308) - τὴν χάριν (Բ Կոր. Ը 9) - զշնորհսն.

ընդ արիմաւ (Տիմ. 84) - ὑπὸ νόμον (Գաղ. Դ 4) - ընդ օրինօք.

զճորհիմ (Տիմ. 297) - χάριτος (Յովհ. Ա 14) - շնորհօք:

1.5.1. Կան դէպքեր, երբ յունարէն այս կամ այն բառը կամ արտայայտութիւնը երկու թարգմանութիւններում տարբեր համարժեքներ է ստացել. դրանցից շատերում Տիմոթէոսի տարբերակն աչքի է ընկնում տառացիութեամբ եւ թերեւս կարող է որակուել որպէս իմաստային պատճենում. որքան (Տիմ. 294) - ὅσα (Մարկ. Ե 19,

- 20) - որ ինչ, զոր ինչ.  
գծաորություն (Տիմ. 308) - χαρακτήρ (Եբր. Ա 3) - նկարագիր.  
յոզոց (Տիմ. 293) - πνεύμάτων (Ղուկ. է 21) - այսոց.  
դիտարեաց (Տիմ. 291) - έπεσκέψατο (Ղուկ. Ա 78) - այց արասցէ<sup>14</sup>.  
լսաորություն (Տիմ. 301) - ύπακοή (Ա Պետր. Ա 2) - հնազանդութիւն.  
տաղաարեաց (Տիմ. 297) - έσκήνωσαν (Յովհ. Ա 14) - բնակեաց.  
առնուք (Տիմ. 305) - λαμβάνομεν (Ա Յովհ. Ե 9) - ունիցիւք.  
արարեալ (Տիմ. 305) - ποιούμενος (Յուդ. 3) - յանձին կալեալ.  
բայն (Տիմ. 306) - τὸ ρῆμα (Հռոմ. Ժ 8) - բանն.  
բայի (Տիմ. 308) - τῷ ρήματι (Եբր. Ա 3) - բանիւ.  
բազում պտուղ բերէ (Տիմ. 296) - πολλὸν καρπὸν φέρει (Յովհ. ԺԲ 24) - բազում արդիւնս առնէ.  
ի հանդիպությունս նորա (Տիմ. 299) - εἰς ὑπάντησιν αὐτῶ (Յովհ. ԺԲ 13) - ընդառաջ նորա.  
ամպ վկայից (Տիմ. 309) - νέφος μαρτύρων (Եբր. ԺԲ 1) - զբազմութիւն վկայից.  
լսալ (Տիմ. 312) - ὑπήκοος (Փիլիպ. Բ 8) - հնազանդ.  
որակություն (Տիմ. 324) - ποιότητα (Սուկ. Պող. Բ 447).  
որակութեանց (Տիմ. 324) - ποιότητων (Սուկ. Պող. Բ 447).  
ոչ գիտացից (Տիմ. 324) - οὐ ἴσασι (Սուկ. Պող. Բ 445).  
սկզբունք (Տիմ. 313) - ἀρχαί (Կող. Ա 16) - պետութիւնք:  
Վերջին օրինակում այդքան տարբեր

- թարգմանութիւնները պայմանաւորուած են յունարէն բառի երկրամաստութեամբ, սակայն կոնտեքստից դատելով՝ Տիմոթէոսի թարգմանութիւնը կարող է եւ սխալի արդիւնք լինել:  
1.5.2. Հետեւեալ օրինակներում տարբերակները թերեւս չէզոք են բառացի եւ ոչ բառացի դիտարկելու տեսանկիւնից՝  
ի՞բր (Տիմ. 292, 307) - πῶς (Ղուկ. Ա 34, Գաղ. Դ 9) - զիտ՞րդ.  
բառից (Տիմ. 49) - τῶν τεσσάρων (Մատթ. ԻԴ 31) - չորից.  
ճանաչեմ (Տիմ. 292) - γινώσκω (Ղուկ. Ա 34) - գիտեմ.  
կարություն (Տիմ. 292, 308) - δύναμις (Ղուկ. Ա 35, Եբր. Ա 3) - զօրութիւն.  
շինեցաւ (Տիմ. 313) - έκτίσθη (Կող. Ա 16) - հաստատեցաւ.  
ծագել (Տիմ. 291) - έπιφάναι (Ղուկ. Ա 79) - երեւել.  
ի ծննդութեան (Տիմ. 291) - ἐπὶ τῇ γενέσει (Ղուկ. Ա 14) - ի ծննդեան.  
ծննդություն (Տիմ. 325) - γέννησιν (Սուկ. Պող. Բ 448).  
կենդանություն (Տիմ. 305) - ζώή (Ա Յովհ. Ե 20) - կեանք.  
գոյն (Տիմ. 312) - τὸ εἶναι (Փիլիպ. Բ 6) - զլինելն.  
անտեսանելոյ (Տիմ. 313) - ἀόρατου (Կող. Ա 15) - աներեւութիւն.  
մէնածիւն (Տիմ. 297) - μονογενής (Յովհ. Ա 14) - միածին.  
լինի (Տիմ. 324) - γίνεταί (Սուկ. Պող. Բ 446).  
բուծանիւն (Տիմ. 324) - τρέφεται (Սուկ. Պող. Բ 447).  
կերակրին (Սուկ. Պող. Բ 447).  
հրաշագոյնս (Տիմ. 324) - θαυμαστόν (Սուկ. Պող. Բ 447).  
զարմանալիք (Սուկ. Պող. Բ 447).  
յարուցանել (Տիմ. 323) - ἀναστῆναι (Սուկ. Պող. Բ 446).  
կանգնել (Սուկ. Պող. Բ 446).  
ճաշակութիւն (Տիմ. 323) - ναύγιον

- (Սուկ. Պող. Բ 445).  
եղանի (Տիմ. 324, ուղղելի է՝ յեղանի, հմմտ. մի քանի տող ներքեւ՝ τρέπεται - յեղանի) - τρέπεται (Սուկ. Պող. Բ 447):  
1.6. Փոխադարձ դերանունները «անձն» գոյականով թարգմանելու փոխարէն Տիմոթէոսի թարգմանիչը անխընարում է դերանուն կիրառել.  
զինքն (Տիմ. 312) - έαυτόν (Փիլիպ. Բ 8) - զանձն.  
ընքեան (Տիմ. 306) - έαυτῷ (Հռոմ. ԺԴ 7) - անձամբ.  
ինքեան (Տիմ. 306) - έαυτῷ (Հռոմ. ԺԴ 7) - անձամբ.  
ինքեան (Տիմ. 210) - έαυτοῖς (Բ Կոր. Ե 15) - անձանց.  
զիս (Տիմ. 300) - έμαυτόν (Յովհ. ԺԵ 19) - զանձն իմ:  
  
**2. ՉԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ**  
  
Թուարկելով միայն Տիմոթէոսի թարգմանութեան յունարանութիւնները՝ դրանց դասական զուգահեռները չենք քննարկում. օրինակներն ինքնին խօսուել են:  
2.1. Յունարան թարգմանիչը կիրառել է իզական սեռի ցուցական դերանուններ՝  
Ատրայ (Տիմ. 292) - αὐτῆς (Ղուկ. Ա 41) - նորա.  
Աւսա (Տիմ. 292) - αὐτῇ (Ղուկ. Ա 35) - ցնա:  
2.2. Յունարան թարգմանիչը կիրառել է արհեստական «եղանիս» գերական անցեալ կատարելի «եղէ» հիմքից, միանշեղ խանդ գերական «լինիս» բայն է՝  
եղանի (Տիմ. 47) - γενέσθαι (Յովհ. Ը 58) - զլինելն.  
եղանի (Տիմ. 324) - էσται (Սուկ. Պող. Բ 446):  
լինիցի (Սուկ. Պող. Բ 446):  
2.3. Յունարան թարգմանիչը կիրառել է «ե-» ածական անցեալ կատարելի

- բազմական 3-րդ դեմքի եզակի թուի, ինչպէս նաեւ այլ դիմալիս ձեւերի հետ՝  
եարար (Տիմ. 242) - πεποίηκεν, έποίησεν (Մարկ. Ե 19, 20) - արար.  
եասաց (Տիմ. 292, 293, 293) - εἶπεν (Ղուկ. Ա 34) - ասէ, լέγει (Մարկ. Բ 8) - ասէ, εἶπεν (Ղուկ. է 22) - ասէ.  
եաւծ (Տիմ. 57) - έχρισεν (Ես. ԿԱ 1) - օծ.  
եասար (Տիմ. 57) - ελάβομεν (Յովհ. Ա 16) - առաք.  
եգրեաց (Տիմ. 311) - ήχμαλώτευσεν (Եփես. Դ 7) - գերեաց:  
2.4. Յունարան թարգմանիչն օգտագործել է օժանդակ բայի արհեստական «ել» անորոշ դերբայը հոլովուած ձեւով՝  
ելով (Տիմ. 308) - ὢν (Եբր. Ա 3, Բ Կոր. Ը 9) - որ է, որ... էր.  
ելոյ (Տիմ. 57) - ὄντος (Եփես. Բ 20) - որոյ է.  
դու մարդ ելով (Տիմ. 47) - σὺ ἄνθρωπος ὢν (Յովհ. Ժ 33) - դու մարդ ես:  
2.5. Յունարան թարգմանիչը կիրառել է «մի» թուականի արհեստական «եզ» եւ «մու» հոմանիշները՝  
եզ Տէր, մու հաւատ, մի մկրտություն (Տիմ. 311) - εἷς κύριος, μία πιστις, ἐν βάπτισμα (Եփես. Դ 5) - մի տէր, մի հաւատք, մի մկրտութիւն:  
2.6. Յունարան թարգմանիչը կիրառել է արհեստական դերբայներ՝ կազմելով դրանք գոյություն չունեցող բայական հիմքերից, յունարան անցեալ ժամանակի, յատկապէս պերֆեկտի երանգն արտայայտելու համար՝  
գրեցեալս (Տիմ. 296) - γεγραμμένα (Յովհ. ԺԲ 16) - որ գրեալն էր.  
գրեցեալս (Տիմ. 47) - τὰς γραφάς (Մատթ. ԻԲ 29) - գզիրս.  
ծնեցեալ է (Տիմ. 304) - γεγέννηται (Ա Յովհ. Ե 1) - ծնեալ է.  
ծնեցեալս (Տիմ. 73, 292) - τὸ γεννώμενον (Ղուկ. Ա 35) - որ ծնանելոցն է,

ծանրացալք (Տիմ. 307) - γνωσθέντες (Գաղ. Դ 9) - ծանուցայք:

2.7. Յունարան թարգմանիչը կիրառել է «-ոք» եւ «-ում» վերջաւորութիւնը ներգոյական հոլովի համար՝

յԱստուածումն (Տիմ. 304) - ἐν τῷ θεῷ (Ա. Յովհ. Դ 20) - յԱստուած.

բոլորում տան (Տիմ. 55) - ἐν τῷ ὄλω τῷ οἴκῳ (Եբբ. Գ 5) - յամենայն տան.

ի ճշմարտում Որդուք (Տիմ. 305) - ἐν τῷ ἀληθίνῳ, ἐν τῷ սίῳ (Ա. Յովհ. Ե 20) - ի ճշմարտի Որդուք:

2.8. Յունարան թարգմանիչը կիրառել է արհեստական նախդիրներ՝

նախ ամենայնի (Տիմ. 313) - πρὸ πάντων (Կոր. Ա 17) - յառաջ քան զամենայն.

թանց նորա (Տիմ. 84) - χωρὶς αὐτοῦ (Յովհ. Ա 3) - առանց նորա.

գեր ամեն անուն (Տիմ. 312) - ὑπὲρ πᾶν ὄνομα (Փիլիպ. Բ 9) - որ ի վեր է քան զամենայն անուն.

գեր ամենայն (Տիմ. 212) - ὑπὲρ πάντα (Եփես. Ա 22) - ի վերայ ամենայն.

ներկիս (Տիմ. 48) - ἐν οὐρανοῖς (Յովհ. ԺԶ 20) - յերկինս.

նաւորս (Տիմ. 182) - ἐν ταῖς ἡμέραις (Եբբ. Ե 7) - յաւուրս.

նրմեզ (Տիմ. 54) - ἐν ἡμῖν (Յովհ. Ա 14) - ի մեզ:

2.9. Յունարէն համեմատական աստիճանով հանդէս եկող ածականները թարգմանելիս Տիմոթէոսի թարգմանիչն անպայման կիրառում է «-ոյն» վերջածանցով համեմատական աստիճանը, իսկ նոր կտակարանում այն կարող է արտայայտուած լինել այլ եղանակներով կամ արտայայտուած չլինել.

մեծագոյն (Տիմ. 305) - μεῖζων (Ա. Յովհ. Ե 9) - մեծ.

դիրավաստակագոյն (Տիմ. 293) - εὐκοπώτερον (Մարկ. Բ 9) - դիւրին.

զանազանագոյն քան զնոսա (Տիմ. 308)

- διαφορώτερον παρ' αὐτοῦς (Եբբ. Ա 4) - լաւ եւս քան զնոսա.

նորագունագոյն (Տիմ. 324, ածանցը կրկնուել է) - νεώτατον (PG. 62. 437) - մատաղ (Ոսկ. Պող. Բ 447).

լաւագոյն եղեալ հրեշտակաց (Տիմ. 308) - κρείττων γενόμενος τῶν ἀγγέλων (Եբբ. Ա 4) - առաւել եղեալ քան զհրեշտակա:

Վերջին օրինակում համեմատութեան եզր հանդիսացող բառի սեռական հոլովի ճշգրիտ վերարտադրումը (հրեշտակաց) շարահիւսական յունարանութիւն է:

Տիմոթէոս Կուզի Հակածառութեան թարգմանութեան առանձնայատկութիւններէց կարելի է նշել նաեւ՝

յերկնուստ (Տիմ. 298, 299) - ἐξ οὐρανοῦ (Յովհ. Ա 32), ἐκ τοῦ οὐρανοῦ (Յովհ. Գ 13) - յերկնից,

էակ (Տիմ. 74) - ὁ ὢν (Հռոմ. Թ 5) - որ է:

### 3. ՇԱՐԱՀԻՍՈՒԹԻՒՆ

3.1. Տիմոթէոսի թարգմանիչը ձգտում է տառացի վերարտադրել յունարէն նախդրար կապակցութիւնները եւ բայի կառավարումով պայմանաւորուած խընդիրների հոլովը, մինչդէռ նոր կտակարանի թարգմանչի կիրառած հայերէնին բնորոշ ձեւերը երբեմն շեղում են այդ կաղապարից՝

ըստ մարմնոյ (Տիմ. 307) - κατὰ σάρκα (Բ Կոր. Ե 16) - մարմնով.

մինչ մահու (Տիմ. 312) - μέχρι θανάτου (Փիլիպ. Բ 8) - մահու չափ<sup>15</sup>.

ի տուն (Տիմ. 292) - ἐπὶ τὸν οἶκον (Ղուկ. Ա 33) - ի վերայ տան.

առ նոսա (Տիմ. 293) - πρὸς αὐτοῦς (Ղուկ. Ե 22) - ցնոսա.

այդ բայց իմ (Տիմ. 175) - ἄλλος πλην ἐμοῦ (Ես. ԽԵ 21) - այլ ոք բաց յինէն.

արտաքս քան զիս (Տիմ. 175) - παρέξ ἐμοῦ (Ես. ԽԵ 21) - ոք բաց յինէն.

ի վերայ նորա գրիցեալն (Տիմ. 296) - ἐπ' αὐτῷ γεγραμμένα (Յովհ. ԺԲ 16) - որ գրեալն էր վասն նորա.

առաջի իմ... նախ իմ (Տիմ. 298) - ἔμπροσθέν μου... πρῶτός μου (Յովհ. Ա 15) - զկնի իմ... նախ քան զիս.

վասն նոցա (Տիմ. 300) - ὑπὲρ αὐτῶν (Յովհ. ԺԷ 19) - ի վերայ նոցա.

առ ինչ... ժամանակ (Տիմ. 302) - εἰς τίνα... καιρόν (Ա. Պետ. Ա 11) - յորում... ժամանակի.

խաւեցեալ հարանց... խաւեցաւ մեզ (Տիմ. 313) - λαθήσας τοῖς πατέρασιν... ἐλάλησεν ἡμῖν (Եբբ. Ա 1-2) - խուեցաւ... ընդ հարս... խուեցաւ ընդ մեզ.

նչ ժամանեցուք զննչեցեալսն (Տիմ. 323) - μὴ φθάσωμεν τοὺς κοιμηθέντας (PG 62. 43) - ոչ ժամանեցուք ննչեցելոցն (Ոսկ. Պող. Բ 445):

Հետեւեալ օրինակում, սակայն, զարմանալիորէն հակառակ պատկերն է՝ մարդով... Յիսուսի Քրիստոսի... Աստուծով Հարամք (Տիմ. 211) - δι' ἀνθρώπου... διὰ Ἰησοῦ Χριστοῦ... θεοῦ πατρός (Գաղ. Ա 1) - ի ձեռն մարդոյ... ի ձեռն Յիսուսի Քրիստոսի... աստուծոյ հօր:

3.2. Յունարէն սղուած օժանդակ բայով անուանական նախադասութիւնը թարգմանելիս դասական թարգմանիչն օժանդակ բայ է աւելացնում, իսկ Տիմոթէոսի թարգմանիչը՝ ոչ. հաւատարիմ քանս (Տիմ. 314) - πιστὸς ὁ λόγος (Տիմ. Գ 8) - հաւատարիմ է բանս,

զի՞նչ յիրագոյն (Տիմ. 323) - τί εὐκολώτερον (PG 62. 437) - ո՞ր դիւրագոյն էցէ (Ոսկ. Պող. Բ 446):

3.3. Դիտարկուող բնագրերում, յատկապէս նոր կտակարանում, յունարէնի հիւստիական շարահիւսական դարձուածները քիչ են հանդիպում, քանի որ դրանք հատկանշական են աւելի բարդ շարադրանքի համար: Սակայն առանձին դեպքեր արձանագրուած են, եւ դրանց թարգմանութիւնները նույնպէս թարգմանիչը դրանք արձանագրուած են<sup>16</sup>, իսկ դասական թարգմանութիւններն՝ արտայայտում հայերէնին յատուկ դարձուածներով (հմմտ. 3.3.1.ա - անորոշ դերբայով տրական<sup>17</sup>, 3.3.1.գ - ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւն, 3.3.2 - «ուղղական անորոշ դերբայի հետ» թարգմանելիս «լինել» անորոշ դերբայի բացթողումից իմաստը չի փոխուել<sup>18</sup>, 3.3.4 - մասնակիութեան իմաստն արտայայտուած է բացառական հոլովով) կամ նկարագրական եղանակով (3.3.1.բ, գ, 3.3.3.ա, 3.3.5):

3.3.1. Հայցական անորոշ դերբայով (accusativus cum infinitivo)՝  
ա) բարձրանալ պարտ է զՈրդին մարդոյ (299) - ὑψωθῆναι δεῖ τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου (Յովհ. Գ 14) - բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ.  
նախ քան զԱբրահամ եղանի (Տիմ. 100) - πρὶν Ἀβραάμ γενέσθαι (Յովհ. Ը 58) - յառաջ քան զլինելն Աբրահամու.  
բ) ասե՛ն ի հրոյ ծախի եւ հաւերձից յարութիւն եղանել (Տիմ. 323) - φασὶν ὑπὸ πυρός ἀναλίσκεσθαι καὶ ἱματίων ἀνάστασιν γίνεσθαι (PG 62. 437) - ասեն. ի հրոյ ծախին եւ հաւերձից յարութիւն լինել (Ոսկ. Պող. Բ 446).  
պարտ ասե՛, եւ հերձուածս ի ձեզ գոյ (Տիմ. 149) - δεῖ... καὶ αἰρέσεις ἐν ὑμῖν εἶναι (Ա. Կոր. ԺԱ 19) - եւ հերձուածք լինելոց են ի ձեզ.  
գ) զո՞ զիս ասե՛ն մարդիկ գոյ գորդիս մարդոյ (Տիմ. 97) - τίνα με λέγουσιν οἱ ἄνθρωποι εἶναι τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου (Մատթ. ԺԶ 13) - զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ.  
մարդեղով նախադասութիւն (305) - παρακαλῶν ἀγωνίζεσθαι (Յուդ. 3) - աղաչել զի ճգնիցիք:

3.3.2. Ուղղական անորոշ դերբայով (nominativus cum infinitivo)՝

արդեւ n° չ յորվագոյն գոյ քեզ թոյն սո-  
ցայն գոյ տարակուսանք (Տիմ. 324) - ἄρα  
πολλῶ σοι δοκεῖ τούτων εἶναι τοῦτο  
ἀπορώτερον (PG 62. 437) - եւ չթուեցի՞  
այս քեզ առաւել տարակուսանք (Ոսկ.  
Պող. Բ 447):

3.3.3. Բացարձակ սեռական (genetivus  
absolutus)

ա) այսբանոյ խառնութեանն եղելոյ եւ  
ցանութեանն (Տիմ. 323) - τοσαύτης δὲ τῆς  
συγχύσεως γενομένης καὶ διασπορᾶς  
(PG 62. 436) - եւ արդ որ այնչափ  
շփոթք եւ ցրումն անդամոց (Ոսկ. Պող. Բ  
446).

բ) Քրիստոսի այսուհետեւ կրելով վասն  
մեր մարմնով (Տիմ. 302) - Χριστοῦ οὖν  
παθόντος σαρκὶ ὑπὲρ ἡμῶν (Ա Պետ. Դ  
1) - Քրիստոսի չարչարելն մարմնով  
վասն մեր<sup>19</sup>:

3.3.4. Մասնակի սեռական (genetivus  
partitivus)

ձկանց իրաքանչիւր (323) - τῶν ἰχθύων  
ἕκαστος (PG 62. 436) - ի ձկանց իւրա-  
քանչիւր ոք (Ոսկ. Պող. Բ 445).

այսոցիկ ոմն (323) - τούτων ὁ μὲν  
(PG 62. 436) - ի նոցանէն ոմն (Ոսկ. Պող.  
Բ 446).

ի վերջինս ատիրցս (313) - ἐπ' ἐσχά-  
του τῶν ἡμερῶν (Եբր. Ա 2) - ի վախճան  
աւուրցս<sup>20</sup>:

3.3.5. Անորոշ դերբայի գոյական-  
նացուած կիրառութիւնը (դասական թարգ-  
մանութեան մէջ համարժէքը գոյական է)

յոչն էութեանէ ի գոյն (324) - ἐκ τοῦ μὴ  
ὄντος εἰς τὸ εἶναι (PG. 62. 436) - յոչնչէ  
ի գոյ (Ոսկ. Պող. Բ 445):

3.4. Յունարէն յօդի օգնութեամբ գո-  
յականացուած, նախդրով սկսուող արտա-  
յայտութիւնները բառացի թարգմանելիս  
յունարան թարգմանիչն օգտագործել է  
նախդիրներէ կուտակուածներ, ընդ որում  
յօդի դիմաց հիմնականում կիրառուած է  
«զ» նախդիրը՝

զ'ի յերկինս եւ զ'ի վերայ երկրիս (Տիմ.  
313) - τὰ... ἐν τοῖς οὐρανοῖς καὶ ἐπὶ τῆς  
γῆς (Կող. Ա 16) - որ ինչ յերկինս եւ  
որ ինչ յերկրի.

յաղագս առ ձեզ շնորհիս (Տիմ. 302) -  
περὶ τῆς εἰς ὑμᾶς χάριτος (Ա Պետ. Ա 10)  
- վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհքն.

զ'ի վերայս երկրի, եթէ զ'ի յերկինս (Տիմ.  
313) - τὰ ἐπὶ τῆς γῆς εἴτε τὰ ἐν τοῖς  
οὐρανοῖς (Կող. Ա 20) - որ ինչ յերկրի եւ  
որ ինչ յերկինս.

զ'նՔրիստոսի (Տիմ.) - ἐν τῷ Χριστῷ  
(Եփես. Ա 20) - ի Քրիստոս.

զիսն խաւսոյի Քրիստոսի (Տիմ. 211) -  
τοῦ ἐν ἐμοὶ λαλοῦντος Χριστοῦ (Բ Կոր.  
ԺԳ 3) - զՔրիստոսի, որ ինեւ... խօսի.

զ'ի անայն Հոգիս (Տիմ. 302) - τὸ ἐν  
αὐτοῖς πνεῦμα (Ա Պետ. Ա 11) - ի նոսա  
Հոգին.

զ'ի պահպանութեան Հոգոյ (Տիմ. 302) -  
τοῖς ἐν φυλακῇ πνεύμασιν (Ա Պետ. Գ  
19) - ոգւոցն որ էին ի բանտին:

Թարգմանութեան այդ եղանակն ար-  
ձանագրուած է նաեւ «Կանոնագրքի»  
«Երկրորդ Առաքելական» եւ Եփեսոսի  
ժողովի կանոններում. այդ երկու կանո-  
նախումբն էլ մենք դասում ենք յունար-  
անութեան զգալի տարր պարունակող  
«նախայունարան» թարգմանութիւններէ  
շարքը:

զ'ի վերայ անրա սահմանեալ դատապար-  
տութիւնն (Բ առաք. ԺԴ, Կ 78.12) - τὴν  
κατ' αὐτῶν ὀρισθεῖσαν ἀργίαν (XVI. p.  
3.221).

վասն առ ամենեւին անխտրութեանն (Ե-  
փես. Ե, Կ 280-281) - διὰ τὴν ἐν πᾶσιν  
ἀδιαφορίαν (V. 60. p. 1722):

3.5. Դասական եւ յունարան թարգմա-  
նութիւնների շարահիսութեան տարբե-  
րութեան տեսանկիւնից վերը նշուած ա-  
ռանձնայատկութիւնները չափազանց  
կարեւոր են, սակայն դրանց օրինակները  
համեմատաբար մեծ թիւ չեն կազմում:

Չանգուածային են յունարէն դերբայների  
ու դերբայական կապակցութիւնների տար-  
բեր եղանակներով թարգմանութեան օրի-  
նակները:

3.5.1. Որոշի առումով կիրառուած  
դերբայական կապակցութեան սովորա-  
կան դասական համարժէքը յարաբերա-  
կան նախադասութիւն էր<sup>23</sup>, իսկ յունար-  
ան թարգմանութեան մէջ այն պատճէն-  
առարկանքում ունենք՝

ա) ենթակայական դերբայ՝  
զգնաղն գնասա՝ զՏէրն (Տիմ. 303) -  
τὸν ἀγοράσαντα αὐτοῦς δεσπότην (Բ  
Պետ. Բ 1) - զոր Տէր գնեաց գնոսա.

խաւսոյի Քրիստոսի (Տիմ. 211) - τοῦ...  
λαλοῦντος Χριστοῦ (Բ Կոր. ԺԳ 3) -  
զՔրիստոսի, որ... խօսի.

հարն յարուցալիս գնա (Տիմ. 310) -  
πατὴρὸς τοῦ ἐγείραντος αὐτόν (Գաղ. Ա  
1) - զօր՝ որ յարոյց գնա.

բ) անցեալ դերբայ՝  
ժառանգութիւն... պահեցեալն (Տիմ. 301)  
- κληρονομίαν... τετηρημένην (Ա Պետ. Ա  
4) - ժառանգութիւնն որ պահեալ է.

սերմնս վարարելալս (Տիմ. 324) - σπέρ-  
μα τὸ καταβαλλόμενον (PG 62. 437) -  
սերմն որ սերմանի (Ոսկ. Պող. Բ 447).

ի... հետեւեցելոյ վիմէն (Տիմ. 307) -  
ἐκ... ἀκολουθούσῃ πέτρας (Ա Կոր. Ժ 4)  
- ի... վիմէն, որ երթալը զհետ նոցա:

Հետեւեալ օրինակում՝  
ի կորեկաւէ... ի վայր արկեցելոյ (Տիմ.  
324) - ἀπὸ τῆς κέχρου... τῆς καταβλη-  
σθείσης (PG 62. 437) - ի կորեկանէ...  
յերկիր անկելոյ (Ոսկ. Պող. Բ 446), ճիշտ

է, դասական թարգմանիչը եւս դերբայը  
է, դասական թարգմանիչը սակայն յունար-  
ան թարգմանութեան մէջ դերբայն աւե-  
րալի տառացի է համապատասխանում

լի յունարէն նախօրինակին, քանի որ՝ ա)  
յունարէն դերբայը «նետել» բայից է՝  
կրաւորական ձեւով, այդպիսին է եւ «ար-  
կեցեալ»-ը (խօսքն իհարկէ կրաւորական

իմաստի եւ ոչ ձեւի մասին է), մինչդեռ  
դասական թարգմանիչը պարզեցրել է իր  
խնդիրը եւ, փոխելով բայի իմաստը, կի-  
րաւոր այն ներգործական առումով, բ)  
«արկեցեալ» դերբայը կազմուած է անց-  
եալ կատարելի հիմքից՝ յունարէն aoris-  
tus-ի դերբայի հետեւութեամբ:

Բարոյախաւսուում որոշի առումով  
հանդէս եկող դերբայը քսանհինգ անգամ  
թարգմանուած է յարաբերական նախա-  
դասութեամբ եւ միայն հինգ անգամ՝  
անցեալ դերբայով<sup>24</sup>:

3.5.2. Դերբայների գոյականաբար կի-  
րառութիւնն անցեալ է որոշի առում-  
ով կիրառութիւնից. դասական համար-  
ժէքը եւս յարաբերական նախադա-  
սութիւնն է<sup>25</sup>, իսկ յունարան թարգմա-  
նութեան մէջ, բացի՝

ա) ենթակայական դերբայից՝  
ուրացողք (303) - ἀρνούμενοι (Բ Պետ.  
Բ 1) - որք... ուրացան.

յարթողն զաշխարհ (304) - ὁ νικῶν τὸν  
κόσμον (Ա Յովհ. Ե 5) - որ յաղթիցէ աշ-  
խարհի.

տեսանալիս զիս (Տիմ. 135) - ἑωρακώς  
ἐμέ (Յովհ. ԺԴ 9) - որ ետես զիս.  
ուսողն զիս (Տիմ. 139) - ὁ τρώγων  
με (Յովհ. Զ 58) - որ ուտէն զիս.

լուսիսն ձեզ... եւ արհամարհալիս զձեզ  
(Տիմ. 211) - ὁ ἀκούων ὑμῶν... ὁ ἀθετῶν  
ὑμᾶς (Ղուկ. Ժ 16) - որ ձեզ լսէ... որ  
զձեզ անարգէ.

արարող (324) - ὁ ποιῶν (PG 62. 436)  
- որ առնէ (Ոսկ. Պող. Բ 445).

բ) անցեալ դերբայից՝  
իջեալ (Տիմ. 299) - ὁ... καταβάς (Յովհ.  
Գ 13) - որ էջն.

ի խաւարի եւ ի ստուերս մահու անտեղոց  
(Տիմ. 291) - τοῖς ἐν σκότει καὶ σκιᾷ  
θανάτου καθημένοις (Ղուկ. Ա 79) - ո-  
րոց<sup>26</sup> ի խաւարի եւ ի ստուերս մահու  
նստէին.

հաւատացեալն (Տիմ. 299) - ὁ πιστευ-  
 'ων (Յովհ. Գ 15) - որ հաւատայ.  
 հաւատացեալն (Տիմ. 304) - ὁ πιστευ-  
 'ων (Ա. Յովհ. Ե 5) - որ հաւատայցէ.  
 եկեալն (Տիմ. 304) - ὁ ἐλθών (Ա. Յովհ.  
 Ե 6) - որ եկն.  
 եկեալն (Տիմ. 297) - ἐρχόμενον (Յովհ.  
 Ա 9) - որ գալոց է.  
 աւացեալոցս (Տիմ. 309) - τοῖς  
 λεγομένοις (Եբր. Ը 1) - խօսիցս<sup>27</sup>.  
 Հանդիպում են նաեւ՝  
 դ) ապառնիք դերբայը՝  
 տեսանելիք եւ անտեսանելիք (Տիմ. 313)  
 - τὰ ὄρατὰ καὶ τὰ ἀόρατα (Կող. Ա 16)  
 - որ երեւին եւ որ ոչն երեւին,  
 դ) գործող անձի «-իչ» վերջածանցով  
 գոյականները՝  
 սրբիչն եւ սրբեալք (Տիմ. 309) - ὁ  
 ἀγιάζων καὶ οἱ ἀγιάζόμενοι (Եբր. Բ 11)  
 - որ սրբէն եւ որ սրբին.  
 աւարիչն (Տիմ. 298) - ὁ πέμψας  
 (Յովհ. Ա 33) - որ առաքեացն.  
 Մկրտիչն (Տիմ. 298) - ὁ βαπτίζων  
 (Յովհ. Ա 33) - որ մկրտէ.  
 վկայիչքն (Տիմ. 304) - οἱ μαρτυροῦντες  
 (Ա. Յովհ. Ե 7) - որ վկայեն.  
 վկայիչ (Տիմ. 304) - τὸ μαρτυροῦν (Ա.  
 Յովհ. Ե 6) - որ վկայէ:  
 Երբեմն «-իչ»-ով անձի անունը կա-  
 րող է հանդէս գալ որպէս դերբայ եւ  
 ստանալ ուղիղ խնդիր<sup>28</sup>.  
 սուրիչ գիւն (Տիմ. 98) - ὁ δοὺς ἑαυτὸν  
 (Ա. Տիմ. Բ 6) - որ ետ գանձն.  
 գերիչն զգերութիւն, եւ սուրիչն սուրս  
 մարդկան (Տիմ. 86) - ἤχμαλώτευσεν αἰχ-  
 μαλωσίαν, ἔδωκεν δόματα τοῖς ἀνθρώποις  
 (Եփես. Դ 8) - գերեաց զգերութիւն եւ ետ  
 պարգեւս մարդկան.  
 սարիչ գերիչն եւ մածոցիչն գնա... ցու-  
 ցաւն զգերիչն եւ սարիչն գնա (Տիմ. 175) -  
 ὁ ποιήσας τὸν οὐρανόν... ὁ καταδείξας  
 τὴν γῆν καὶ ποιήσας αὐτήν (Ես. ԽԵ 18)

- որ արար գերիչն... որ հաստատեաց  
 գերիչը եւ արար զնա:  
 3.5.3. Պարագայի առումով կիրառուած  
 դերբայների դասական թարգմանութիւնն  
 էր հիմնական բայի հետ համադասական  
 շաղկապով կապակցուած (երբեմն՝ ա-  
 րանց շաղկապի) դիմադր բայական ձեւը,  
 իսկ յունարան թարգմանութեան մէջ այն  
 ձգտել են պատճէնել՝  
 ա) անցեալ դերբայով՝  
 պատասխանեալ եսաց (Տիմ. 293) -  
 ἀποκριθεὶς εἶπεν (Ղուկ. է 22) - պատաս-  
 խանի ետ եւ սսէ.  
 գնացեալ պատմեցէք (Տիմ. 293) -  
 πορευθέντες ἀπαγγείλατε (Ղուկ. է 22) -  
 երթալք պատմեցէք.  
 պատասխանեալ... սսէ (Տիմ. 296) -  
 ἀποκρίνεται... λέγων (Յովհ. ԺԲ 23) -  
 պատասխանի ետ... եւ սսէ.  
 բ) անորոշ դերբայի գործիական հոլո-  
 վով՝  
 գիտելով... եսաց (Տիմ. 293) - ἐπιγ-  
 νούς... λέγει (Մարկ. Բ 8) - գիտաց... եւ  
 սսէ.  
 հաւատարմով կենդանութիւն յաիտեանական  
 ունիցիք (300) - πιστεύοντες ζῶτην αἰώνιον  
 ἔχετε (Յովհ. Ի 31) - հաւատայցէք եւ  
 զկեանս յաւիտեանականս ընդունիցիք.  
 գրել ձեզ մաղթելով (Տիմ. 305) - γράψαι  
 ὑμῖν παρακαλῶν (Յուդ. 3) - գրել ձեզ եւ  
 աղաչել:  
 Հմմտ. նոյն յարաբերակցութիւնը  
 «Նիկիական»<sup>29</sup> եւ Սարգիկէի կանոնե-  
 րում.  
 լքանէ թողու... եւ... փոփոխեացի (Անտ. Գ  
 207.11) - καταλιπών... ἀπέλθοι (Ant. III.  
 p. 44. 6-7<sup>30</sup>).  
 փոխելով... եկեացէ (Սարգ. ԺԷ 269.  
 11-12) - φεύγων... ἔλθοι (Sard. XVII. p.  
 70. 22-23<sup>31</sup>):  
 Յունարէն դերբայական դարձուածի  
 դասական համարժէք կարող էր հանդի-  
 սանալ եւ ժամանակի պարագայ երկրոր-

դական նախադասութիւնը՝  
 անկեալ գնա (Տիմ. 323) - πεσόντα αὐ-  
 τόν (PG 62. 436) - իբրեւ անկաւ... զնա  
 (Ոսկ. Պող. Բ 445):  
 Բարոյախաւս-ի մէջ պարագայի առու-  
 մով կիրառուած դերբայը տասնութ ան-  
 գամ թարգմանուած է հիմնական բային  
 համադաս դիմադր բայական ձեւով (ամ-  
 քառայն զթէս եւ... հակառակի ընդ նաւս 7 -  
 ἵψοι τὰς πτέρυγας... ἐρίζον τοῖς πλοῖοις  
 35) եւ ութ անգամ՝ ժամանակի ու պատ-  
 ճառի երկրորդական նախադասութիւնե-  
 րով (օրինակ՝ ի գոչին հարկամի, քանզի գեր-  
 ծանել կամի 5 - κράζει βουλόμενον  
 εκφυγεῖν 34)<sup>32</sup>:  
 3.5.4. Հետեւեալ օրինակներում թարգ-  
 մանութեան տարբեր եղանակները պայ-  
 մանաւորուած են նաեւ յունարէն դերբայ-  
 ների տարբեր մեկնաբանութեամբ. յունա-  
 րան թարգմանիչն ընկալել է որպէս որպէս  
 պարագայի առումով կիրառուած<sup>33</sup> եւ  
 թարգմանել անորոշ դերբայի գործիական  
 բնորոշ<sup>34</sup>, իսկ դասական թարգմանիչը՝ ո-  
 բնորոշի առումով, եւ թարգմանել յարաբե-  
 րական նախադասութեամբ.  
 աղքատացաւ փարթաւ երով (Տիմ. 210) -  
 ἐπτώχευσεν πλούσιος ὢν (Բ Կոր. Ը 9) -  
 աղքատացաւ որ մեծատունն էր,  
 եկեացէն գայրք... ոչ խնայելով (Տիմ. 148-  
 9) - εἰσελεύσονται λύκοι... μὴ φειδόμενοι  
 (Գործ. Ի 29) - գայրքն գայլք... որ ոչ  
 խնայեցեն,  
 երով... բերելով... աստալ (Տիմ. 308) -  
 ὢν... φέρων... ἐκάθισεν (Եբր. Ա 3) - որ  
 է... որ կրէ... նստաւ:  
 Այսպիսով, յունարէն իւրապատուկ  
 շարահիւսական դարձուածները բառացի  
 (յունարան թարգմանութիւններում) կամ  
 նկարագրական եղանակով եւ հայերէնին  
 բնորոշ համապատասխան դարձուածների  
 միջոցով (դասական թարգմանութիւնե-  
 րում) թարգմանելու հանրայայտ հա-  
 կադրութեան կողքին (նշենք նաեւ բա-

ղադրեալ, այդ թւում՝ նախածանցաւոր  
 բառերը պատճէնելու եւ լեզուում եղած  
 համարժէքներով թարգմանելու հակադիր  
 մեթոդները) ամէնից յաճախ դիտուում է  
 հետեւեալ տարբերութիւնը. յունարան  
 թարգմանիչները ձգտում էին դերբայա-  
 կան կապակցութիւնները թարգմանել  
 դերբայական կապակցութիւններով, մինչ-  
 դեռ դասական թարգմանութիւններում  
 դրանց առաւել սովորական համարժէքը  
 յարաբերական նախադասութիւնն էր, եթէ  
 կապակցութիւնը հանդէս էր գալիս որոշ-  
 չի առումով կամ գոյականացուած, եւ  
 համադասական շաղկապով կապակցուած  
 դիմադր բայական ձեւը, պարագայի ա-  
 ռումով կիրառուելու դէպքում:  
 Պէտք է նշել, որ յունարէն իւրապա-  
 տուկ դարձուածների բառացի թարգմա-  
 նութեան առանձին դէպքեր հանդիպում  
 են արդէն դասական թարգմանութիւնե-  
 րում, եւ հէնց նոր կտակարանում՝  
 Հայցական անորոշ դերբայով (Հմմտ.  
 3.3.1)՝  
 կամիս զձեզ անոցս յինել - θέλω δε  
 ὑμᾶς ἀμερίμνους εἶναι (Ա. Կոր. է 32).  
 բացարձակ սեռական (Հմմտ. 3.3.3)՝  
 եւ մինչ դեռ պոչուցեալ հայէին ընդ երկինս  
 երթայրն անոցս - Καὶ ὡς ἀτενίζοντες  
 ἦσαν εἰς τὸν οὐρανὸν πορευομένου αὐτοῦ  
 (Գործ. Ա 10),  
 յունարէն գոյականացնող յօդի թարգ-  
 մանութիւնը «գ-» նախդրով.  
 երթայր սուք զկայսերն՝ կայսեր, եւ զա-  
 ստուծոյ՝ աստուծոյ - ἀπόδοτε οὖν τὰ  
 Καίσαρος Καίσαρι καὶ τὰ τοῦ θεοῦ τῷ  
 θεῷ (Մատթ. ԻԲ 21).  
 զաստուծոյն... զմարդկան (Մատթ. ԺԶ  
 23) - τὰ τοῦ θεοῦ... τὰ τῶν ἀνθρώπων.  
 երկու հոլովական վերջաւորութեան  
 միացութիւն՝ որպէս յունարէն թեք հոլո-  
 վով դրուած յօդի օգնութեամբ գոյակա-  
 նացուած, թէք հոլով պարունակող բա-

ուսակապակցութեան համարժէք՝

էկին առ իրեանցս - ἴλαθον πρὸς τοὺς ἰδίουσ (Գործ. Դ 23)<sup>35</sup>.

ինչպէս նաեւ ոչ թարգմանական տեքստերում՝

զ'առ ի ներքոյս երկնից<sup>36</sup> (Հմմտ. 3.4).

զ'առ ի միմեանց պատուեալ գգովութիւնս<sup>37</sup>:

Վերջին օրինակները վկայում են, որ միանգամայն իրաւացի է Յոս Վայտենբերգը, երբ փորձում է յունարան հայերէնի առանձնայատկութիւնների արմատները մատնանշել դասական լեզուում<sup>38</sup>:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տէ՛ս Գ. Մուրադեան, «Պիտոյից գրքի ոչ թարգմանական մասերի լեզուն եւ հայ հեղինակների յունարանութիւնները», Աշտանակ (հայագիտական պարբերագիրք), Գ, Երեւան, 2000, էջ 99-122:
- 2 Նախածանցատր բառերի մասին տէ՛ս Н. Адонци, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. СXXXIV-CXXXV. Յ. Մանանդեան, Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 111 («Յունարան հայերէնի հիմնական առանձնայատկութիւնն էր յունարան յատուկ բառակազմութիւնը, գլխատրապէս նախորդների միջոցով»): Գ. Զահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954, էջ 47-48, С. С. Арешвациян, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, сс. 156-158, 210-218: Ձեռքարանական յունարանութիւններն ի մի է բերել Հր. Աճառեանը, Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 1951, էջ 143-155, իսկ շարահիւսական յունարանութիւնների ամէնից սպառնիչ ցանկը, ճիշտ է, առանց բնագրային վկայակոչումների, կազմել է Օ. Մերսիէն՝ Ch. Mercier, "L'école Hellénistique dans la littérature arménienne", REArm, N. S., 13, 1978-1978, pp. 59-75:
- 3 Հր. Աճառեան, Նշ. աշխ., էջ 157-160:
- 4 Յովհաննու Ոսկերեանի Մեկնութիւն թղթոցն Պաղոսի, հատոր երկրորդ, Վենետիկ, 1862
- 5 Յիշենք, որ նշուած թարգմանութեան թուագրման շուրջ տարակարծութիւնների հետեւանքով միասնական կարծիք գոյութիւն չունի ողջ յունարան դպրոցի գործունէութեան սկզբնատրման ժամանակի վերաբերեալ. ըստ Մանանդեանի, այդ երկի թարգմանութեամբ է սկսում յունարան

- դպրոցի գործունէութեան երկրորդ փուլը՝ Յ. Մանանդեան, Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 101, եւ նա այն թուագրում է 552-564 թթ-ով, մինչդեռ Գ. Տէր-Մկրտչեանը, հիմնուելով տոմարական ճշգրիտ հաշուարկի վրայ, այն թարգմանում է համարում 480-484 թուականների միջեւ. տէ՛ս Գ. Տէր-Մկրտչեան, «Հայ մատենագրութեան հնագոյն թուականները», Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1979, էջ 388-395:
- 6 Այդ յարաբերական ազատութիւնը, սակայն, հասկանալի պատճառներով զգալի չափով սահմանափակուած է հէնց Նոր Կտակարանի թարգմանութեան մէջ, ի տարբերութիւն, սակայն, «Նիկիական կանոնների», որոնցում շարադասութիւնը յաճախ շեղում է բնօրինակից. հանդիպում են մէկ բառը երկու հոմանիշով թարգմանելու դէպքեր եւ «ազատ թարգմանութեան» այլ արտայայտումներ:
- 7 Տիմոթէոսի եպիսկոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովն Քաղկեդոնի, Էջմիածին, 1908, նշում է էջը:
- 8 Ա. Մուրադեանը (Յունարան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերականական տերմինաբանութեան ստեղծման գործում, Երեւան, 1971, էջ 151) նախածանցների կերտման աղբիւրների թում մատնանշում է մակրայներ (օր. «նախ-», «վեր-»): Թերեւս վերջիններիս անլայցնենք եւ «վայր-» նախածանցը՝ «ի վայր» մակրայի արմատից. այդ դէպքում «վայրարկեալս» եւ «վայրասանդարմետից» օրինակները (1.1.2.ա) հնարատր կը լինի դիտել նախածանցատր բառերի շարքում: Գ. Զահուկեանը, թուարկելով յունարան նախածանցների կազմատրման աղբիւրները, նշում է. «արմատական ձեւեր... որոնց բաղադրեալ ձեւերը սովորական նախադրութիւններ եւ նախաբաղադրիչներ են... ներ (ի ներքս, ի ներքոյ, ներքս-) ... վեր (ի վերայ, վերնա-)», տէ՛ս Գ. Բ. Զահուկեան, «Յունարան հայերէնը եւ նրա մշակած նախածանցների համակարգը», ՊԲՀ, 1993, N 1, էջ 10
- 9 Քանի որ այդ յուշարձանի մեր պատրաստած երկնագունեան հրատարակութիւնը դեռեւս անտիպ է, էջերը նշում են ըստ հետեւեալ հրատարակութիւնների՝ Н. Марр, Физиолог, армяно-грузинский извод (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VI), СПб, 1904 (այդ հրատարակութեան հիմքում ընկած ձեռագրի վրայ, որն արտացոլում է հայերէն տեքստի հնագոյն վիճակը, ՄՄ N 2101, հիմնուել ենք նաեւ մենք, այն տարբերութեամբ, որ, օգտագործելով այլ ձեռագրերի ընձեռած տարբերությունները, աշխատել ենք տեքստը հնարատրիսու համապատասխանեցնել յունարէն նախօրինակին) եւ А. Karnejev, "Der Physiologus der Moskauer Synodalbibliothek. Ein Beitrag zur Lösung der Frage des armenischen und eines alten lateinischen Phy-

- siologus", Byzantinische Zeitschrift, III, 1894 (որը մեր պատրաստած հրատարակութեան հիմքում ընկած եւ յունական չորս յայտնի խմբագրութիւններից զանազանող՝ հայերէն թարգմանութեան ամէնից մօտ բնագիր պարունակող 11-րդ դարում գրուած մի ձեռագրի հրատարակումն է):
- 10 Սոկրատայ Արդիաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897
- 11 Sokrates Kirchengeschichte, Herausgegeben von G. Ch. Hansen, Mit Beiträgen von M. —irinjan Berlin, 1995
- 12 Կանոնագիրք հայոց՝ աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964
- 13 Հմմտ. վերը. մէնածին (Տիմ. 297) — μονογενής (Յովհ. Ա 14) - միածին, նաակոծութիւն (Տիմ. 323) — ναδάριον (PG 62. 436) - նաաքելութիւն (Ոսկ. Պող. Բ 445):
- 14 Հմմտ. Նոր Կտակարանի տեքստում էπισκέψεται (համապատասխանում է «այց արագեք» ընթերցմանը) եւ «այց արար» (համապատասխանում է էπισκέψατο ընթերցմանը) տարբերությունները:
- 15 Հմմտ. սակայն ἕως θανάτου - «մինչեւ ցմախ» (Յովհ. Դ 9): Յղում ենք ըստ հետեւեալ հրատարակութեան. J. J. Weitenberg, Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of the Book of Jonah, Amsterdam, Atlanta, GA, 1992 (Dutch Studies in Armenian Language and Literature 1):
- 16 3.3.3.ք օրինակում բացարձակ սեռական բառի իմաստով պատճենում չէ, այլ թարգմանում տառացիութեան զգալի աստիճան պատճենում «տեսնալ ասելով» տիպի դարձուածով, որովհետ «տեսնալ ասելով» տիպի դարձուածով, որը Գ. Ուլունդեանը (Գ. Ուլունդեան, «Տեսնալ» օրինակները յունարէնի բացարձակ սեռականի հայերէն թարգմանութիւնը Բարսեղ Կեսարացոյ հայերէն բնագրում», ՊԲՀ, 1989, 1, էջ 167-176) համարում է յունարէն բացարձակ սեռականը տառացիորէն պատճենելու եւ Նոր Կտակարանում (պարզ նաեղականներով ազատ թարգմանելու) պատճենի խաղաղութեամբ, ժամանակի կամ պատճենի ստորադասական նախադասութեամբ, «ի» կամ «ընդ» նախորդով եւ անորոշ դերբայի կամ գոյալի կամ գործիական հոլովով, տէ՛ս էջ 168-9) իրար հակադրուող ձեւերի միջեւ միջանկեալ, հայերէնի համար նոր մշակուած մի ձեւ (տէ՛ս յատկ. էջ 172), որի ի յայտ գալը նա բացատրում է թու հայերէն «անցեալ դերբայը սեռական ենթակայի հետ» դարձուածի եւ այլ գործօճների ազդեցութեամբ:
- 17 Հմմտ. Նոր Կտակարանում «պարտ էր կատարել գոյն» եւ ἔδει πληρωθῆναι τὴν γραφὴν (Գործ. Ա 16), «պարտ է վկայ լինել միում» - δεῖ... μάρτυρα... γενέσθαι ἕνα (Գործ. Ա 22): Հմմտ. նաեւ «լաւ է ինձ մտանել՝ քան թէ իցեմ կենդանի» - καλὸν τὸ ἀποθανεῖν με ἢ ζῆν με (Յովհ. Դ 3). առաջին «անորոշ դերբայի հետ հայցական հոլովը» թարգմանում է «անորոշ դերբայի հետ

- տրական հոլովով», իսկ երկրորդը՝ նախադասութեամբ: Նաեւ՝ «ի նուազել հոգոյ իմոյ» - ἐν τῷ ἐκλείπειν... τὴν ψυχὴν μου (Յովհ. Բ 8), «ի ծագել արեւուն» - ἄμα τῷ ἀνατεῖλαι τὸν ἥλιον (Յովհ. Դ 8):
- 18 Հմմտ. նման երեւոյթ «հայցական անորոշ դերբայի հետ» կառոյցի թարգմանութեան մէջ՝ «մի ոք համարիցի զիս ազգաս» - μη τίς με δόξει ἄφορα εἶναι (Բ Կոր. ԺԱ 16):
- 19 Հմմտ. նոյն մէջբերման միւս թարգմանութիւնը. «Քրիստոսի կրողի մարմնով վասն մեր» (Տիմ. 131): Հմմտ. նաեւ հետեւեալ օրինակները Նոր Կտակարանից. բացարձակ սեռականին համապատասխանում է ժամանակի պարագայ երկրորդական նախադասութիւն՝ «մինչդեռ նա զայս ածէր զմտաւ» - ταῦτα δὲ αὐτοῦ ἐνθυμηθέντος (Մատթ. Ա 20), «իրբն գնացին նքա» - ἀναχωρησάτων δὲ αὐτῶν (Մատթ. Բ 13), «մինչդեռ հալէին նքա» - βλεπόντων αὐτῶν (Գործ. Ա 9), «եւ իրբն եղեւ բարբառս» - γενομένης δὲ τῆς φωνῆς (Գործ. Բ 6), նաեւ՝ «մինչ էի անդրէն յերկիրն իմում» - ὄντος μου ἐν τῇ γῆ μου (Յովհ. Դ 2), անորոշ դերբայն «ի» նախորդով՝ «ի վախճանելն Հերովդի» - τελευτήσαντος τοῦ Ἡρώδου (Մատթ. Բ 19), «ի հասանել հոգոյն արքայ ի վերայ ձեր» - ἐπελθόντος τοῦ ἀγίου πνεύματος ἐφ' ἡμᾶς (Գործ. Ա 8):
- 20 Երկու թարգմանութիւնների տարբերութեան պատճառը նաեւ էջոճտո բառի տարբեր ընկալումն է. առաջին դէպքում այն ընկալուել է որպէս ածական, իսկ Նոր Կտակարանում՝ որպէս այդ ածականի գոյականակերպ կիրառութիւն՝ «վերջ» իմաստով:
- 21 F. Lauchert, Die Kanones der altkirchlichen Concilien, Freiburg, Leipzig, 1896.
- 22 P.-P. Joannou, Les canons des concils œcuméniques, t. I, Roma, 1962.
- 23 Հմմտ. «զկարասին, որ էր ի նախին» - τῶν σκευῶν τῶν ἐν τῷ πλοῖω (Յովհ. Ա 5), «նա որ երթայր» - πλοῖον βαδίζον (Յովհ. Ա 3):
- 24 Նոր Կտակարանի՝ մեր ուսումնասիրած հատուածում (Մատթ. Ա, Բ) որոշի առումով կիրառուած յունարէն դերբայի դիմաց մէկ անգամ հանդիպում է անցեալ դերբայ (Ա 24), սակայն աւանդուած է յարաբերական նախադասութեան վեց դէպք (Ա 16, Ա 20, Բ 2, Բ 15, Բ 16, Բ 17):
- 25 Հմմտ. «որ պահէին» - φυλασσόμενοι (Յովհ. Բ 9):
- 26 Յօդի յոգնակի տրական ձեւի արտացոլումն է:
- 27 Յարաբերական նախադասութիւն չէ, այլ գոյական:
- 28 Մինչդեռ այն անուն է եւ պահանջում է առարկայական սեռականով (genetivus objectivus) խնդիր, հմմտ. «արարչին իրոյ» - τῷ ποιήσαντι αὐτόν (Եբր. Գ 2): Հմմտ. եւ ենթակայական դերբայի նմանօրինակ կիրառութիւնը՝ «զգնալն զնոսա», «յարուցալին զնա» (3.5.1.ա), «յարթողն զաշխարհ» - «տեսանողն զիս», «տառողն զիս», «արհամարհողն զձեզ» (3.5.2.ա), մինչդեռ այն

նոյնպէս պահանջում է ոչ թէ ուղիղ, այլ առարկայական սեռականով խնդիր. «ճշմարտութեանն յաղթող», «զծնողն յոր», «րողք իմ» (Մ. Մինասեան, *Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն*, Ժնեւ, 1996, էջ 225):

29 «Նիկիական» կանոնները բաղկացած են եօթ կանոնախմբից (Անկիրայի, Նիկիայի, «Վեսարիայի», Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկէի) եւ կազմում են *Կանոնագրքի* ամենավաղ եւ բնական է, դասական թարգմանական շերտը, իսկ Սարդիկէի ժողովի կանոնախմբը միակ կանոնախմբում է, որի թարգմանութիւնը բնորոշում է որպէս յունաբան:

30 F. Lauchert, *Աջ. հրատ.*

31 Նոյն տեղում:

32 Մատթ. Ա, Բ փոխաներում պարագայի առումով կիրառուած դերբային չորս անգամ համապատասխանում է հիմնական բային համադաս. «եւ» շաղկապով կապակցուած դիմաւոր բայը (հմմտ. «դարձան եւ ասեմ» - ἀπέστρεψαν... λέγοντες (Յովն. Գ 9), նաեւ երեք անգամ՝ առանց շաղկապի), եօթ անգամ՝ ժամանակի կամ պատճառի երկրորդական անխաղաղութիւնը, սակայն եւ եօթ անգամ՝ անցեալ դերբայը:

33 Հմմտ. որոշ չի առումով կիրառուած դերբայի ընկալումը որպէս պարագայի առումով կիրառութիւն Աստուածաշնչում՝ «եւ եղեւ բան տեսոն առ Յովնան երկրորդ անգամ եւ ասէ» - Καὶ ἐγένετο λόγος κυρίου πρὸς Ἰωάνν ἐκ δευτέρου λέγων (Յովն. Գ 1):

34 Որոշ չի առումով կիրառուած յունարէն դերբայի

դիմաց անորոշ դերբայի գործիական հոլովը կիրառուել է եւ այլ թարգմանութիւններում՝ Դիոնիսիոս Թրակացու *Քերականութեան մէջ*՝ «անուն է մասն բանի հոլովական մարմին կամ իր նշանակելով» - ὄνομα ἐστὶ μέρος λόγου πτωτικὸν σῶμα ἢ πρᾶγμα σημαῖνον (H. Adoni, *Աջ. աշխ.*, էջ 12. 22), *Պիտոյից գրքում* «Երաւ է բան բացասութեամբ գլխաւորեալ յորորելով յինչ կամ հրաժարեցուցանելով» (*Գիրք պիտոյից*, Երեւան, 1993, էջ 44. 3-4, հմմտ. նաեւ էջ 269, ծմբ. 3) - Γνώμη ἐστὶ λόγος ἐν ἀποφάσει κεφαλαϊώδης ἐπὶ τὶ προτρέπων ἢ ἀποτρέπων (Aphthonii Progymnasmata, Ch. Walz, *Rhetores Graeci*, vol. I, Stuttgartiae, 1832, p. 67), «Արտասանութիւն է բան պատմական ի դէմս ածելով երեւելապէս գլխունեալն» (անդ, էջ 201. 3-4) - Ἐκφρασις ἐστὶ λόγος περιηγηματικὸς ὑπὸ ὅσιν ἄγων ἐναργῶς τὸ δηλοῦμενον (անդ, էջ 103.8): Բերուած օրինակներում, թում է, անորոշ դերբայի գործիական հոլովն օժտուել է իրեն ոչ հատուկ որոշ չի առումով: Գուցէ նման մեկնաբանութիւն կարելի է տալ եւ Տիմոթէոսի նշուած օրինակներին:

35 Վերջին օրինակի համար հմմտ. Գ. Մուրադեան, *Աջ. աշխ.*, էջ 108 (տե՛ս ծմբ. 1):

36 Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 155.5:

37 Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը եւ թարգմանութիւնը Մ. Արեղեանի, Երեւան, 1941, էջ 28:

38 Jos J. S. Weitenberg, "Linguistic Continuity in Armenian Hellenizing Texts", *Le Muséon*, t. 110, fasc. 3-4, 1997, pp. 447-458.

### ԱՍՈՐԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ ՈՐՈՇ ԳՈՐԾԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԼԱԻՐԵՆՏԻ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

#### «ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ»

Հայ առաջին թարգմանութիւնները կատարուել են ասորերէնից: Գրերի գիւտից յետոյ թարգմանչական բնագաւառում այս գերապատուութիւնը պատահաբար կանխապես չէր հայտնուած է Հայ երկրականութեան մէջ Ասորական Գեղեղեցու դպրութեան ունեցած դերով ու ազդեցութեամբ՝ մի բան, որ V դարի սկզբին ցայտուն ու ակնյայտ էր, քան յունական Համապատասխան ոլորտի ազդեցութիւնը:

Ասորական թարգմանութիւնների գերակշիռ մասը կատարուել է V դարի առաջին կեսին: Թարգմանութիւնները բովանդակային առումով գերազանցապէս սորերէնից թարգմանուել են նաեւ այնպիսի գործեր, որոնք ասորերէն են թարգմանուած եղել այլ լեզուներից՝ յատկապէս շրջանից իսկ գործել է ոչ թէ պատահականութեան, այլ նպատակաւոր դրուածութեան սկզբունքը:

Բնականաբար, հնարաւոր էէ անդրադառնալ ասորական բոլոր թարգմանութիւններին. դրա կարիքը թերեւս չկայ էր քանի որ այդ թարգմանութիւնները բաւականաչափին-քերականական աւելի շատ ընդհանրութիւններ են դրսեւորում, քան տարբերութիւններ<sup>1</sup>:

Կ'անդրադառնանք հիմնականում այն գործերին, որոնց բառապաշարը ուշագրաւ է բառային (չբառարանագրուած) վկայութիւնների, նոր բառիմաստների բառակազմական ուշագրաւ երեւոյթների եւ այլ իրողութիւնների տեսակէտից:

«Վկայք Արեւելիցը» ասորերէնից թարգմանուած սրբախօսական երկերի ժողովածու է, որը նուիրուած է պարսից քրիստոնեաների, այսպէս կոչուած, մեծ հայածանքների նկարագրութեանը:

Ժողովածուն հայերէն է թարգմանուել 454-464 թթ. այն թարգմանել է Աբրահամ Խոստովանողը: Վերջինիս կենսագրական տեղեկութիւնների մանրամասները յայտնի չեն: Ենթադրուում է, որ ծնուած պէտք է լինի IV դարի 60-ական թթ.: Ամենայն հաւանականութեամբ եղել է Սահակ-Մեսրոպի առաջին աշակերտներից, որոնք կանոնաւոր կրթութիւն են ստացել՝ խորանալով կամ ասորերէնի կամ յունարէնի մէջ:

Քննական բնագիրը հրատարակել է մեծանուն բանասէր Գալուստ Տէր-Մկրտչեանը («Աբրահամու Խոստովանողի վկայք արեւելից». թարգմանութիւնը յատկապէս՝ աշխատասիրութեամբ Գալուստ Տէր-Մկրտչեանի, էջմիածին, 1897-1900/1921): Հայ բանասիրութիւնը համաձայնորէն անդրադարձել է այդ երկին: Գիրքը յատուկ քննութեան է արժանացել նաեւ ասորագէտ Լ. Տէր-Պետրոսեանի կողմից (Լ. Տէր-Պետրոսեան, 1976): «Վկայք» Հայ թարգմանական գրականութեան լաւագոյն նմուշներից մէկն է. «այն աչքի է ընկնում այնպիսի հարուստ լեզուով, գունեղ ոճով եւ սահուն շարադրանքով, որ եթէ չլինէին առանձին ասորաբանութիւնները, կարելի է ենթադրել, թէ գործ ունենք որեւէ Հայ հեղինակի ինքնուրոյն երկասիրութեան հետ» (Լ. Տէր-Պետրոսեան, 1976, 73):